



**ՀՔԱ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ.

1. ՀՀ դատական համակարգի համապարփակ և արմատական փոփոխությունների շարունակական բացակայությունը նպաստում է արդարադատության համակարգի նկատմամբ հանրային վստահության խաթարմանը, էապես արժեզրկում մեկնարկված դատական և իրավական բարեփոխումները:

2. Նախաձեռնվող փոփոխությունները պետք է ընթանան իրավունքի գերակայության, համաչափության և արդար դատաքննության իրավունքի հիմնարար երաշխիքների ապահովման նախապայմանով:

3. Օրենքին հետադարձ ուժ հաղորդելու հարցերն անհրաժեշտ է դիտարկել Սահմանադրության բարեփոխումների շրջանակներում՝ լավագույն փորձի վրա հիմնված, խիստ իրավաչափ նպատակ հետապնդող և հանրային շահից բխող բացառություն նախատեսելու միջոցով:



**1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ**

ՀՀ արդարադատության նախարարությունը 2021 թվականի դեկտեմբերի 14-ին հանրային քննարկման է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» և «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծեր¹՝ առաջարկելով դատավորների ստուգման համար նոր լրացուցիչ օրենսդրական գործիքներ: 2021 թվականի դեկտեմբերի 16-ին նախագծերն ուղարկվել են «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողով (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: 2022 թվականի մարտի 21-ին հրապարակվել է նախագծերի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի No. 1074/2021 կարծիքը (CDL-AD(2022)002)²:

Նախագծերով առաջարկվում էր սահմանել լրացուցիչ անհամատեղելիության պահանջ հետևյալ բովանդակությամբ՝ «անհամատեղելիության պահանջների խախտում է համարվում նաև դատավորի կողմից մարդու հիմնարար իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտով արձանագրված միտումնավոր խախտում կատարած լինելու փաստը, եթե Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել տասնհինգ տարի»:

Նախագծերի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը (այսուհետ՝ Կազմակերպություն) 2021 թվականի դեկտեմբերի 29-ին հրապարակել է խիստ բացասական դիրքորոշում³, հայտնելով որ.

- ✚ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտով արձանագրված խախտում կատարած լինելու փաստը չի կարող ներառվել անհամատեղելիության պահանջների խախտումների շարքում, այն ըստ էության ներկայացնում է կարգապահական խախտման տեսակ:
- ✚ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կողմից կայացված ակտերում չի հաստատվում դատավորի մեղքը, խախտումը «միտումնավոր» կատարած լինելու հանգամանքը. դատավորի կողմից կատարված խախտման դիտավորյալ կամ անզգույշ լինելու հանգամանքը քննվում և հաստատվում է կարգապահական

¹ Նախագծերը 08.04.2022թ. դրությամբ հանվել են e-draft.am կայքից:

² Վենետիկի հանձնաժողովի [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2022\)002-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2022)002-e)

³ Տե՛ս [ՀՔԱՎ դիրքորոշումը՝ ՀՀ դատական օրենսգրքում և Մահմանադրական դատարանի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի վերաբերյալ](#):

վարույթի շրջանակներում, ըստ այդմ, առանձին դատավորի մեղքը հարկավոր է քննարկման առարկա դարձնել Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննության ենթակա կարգապահական վարույթի շրջանակներում:

- ✦ Միջազգային դատական աստյանի կողմից արձանագրված մարդու հիմնարար իրավունքի խախտման փաստը պետք է անցնի համաչափ քննություն՝ վարույթային բոլոր երաշխիքների խստիվ պահպանման, խախտման բազմակողմանի, լրիվ քննության և խախտմանը համաչափ կարգապահական տույժ նշանակելու սկզբունքների հենքի վրա:
- ✦ Այն որ, Նախագծերի կարգավորումները տարածվում են Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային աստյանի կայացրած ակտով արձանագրված մինչև 15 տարվա վաղեմության խախտում կատարած լինելու դեպքերի վրա՝ հակասում է ՀՀ Սահմանադրության անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերին հետադարձ ուժ տալու արգելքի սկզբունքին:

Կազմակերպության բոլոր նկատառումները և մտահոգությունները հաստատվել են նաև Վենետիկի հանձնաժողովի կարծիքում, որում, ի թիվս այլնի, նշվել է.

- ❖ Նախագծով նախատեսված անհամատեղելիության նոր հիմքը հավասարազոր է կարգապահական խախտման, ուստի կարգապահական վարույթի ժամանակ գործող բոլոր երաշխիքներն ու իրավունքները պետք է ապահովված լինեն:
- ❖ «Միտումնավոր խախտում» եզրույթը. կարևոր է, որ ՀՀ վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) վճիռները չօգտագործվեն որպես դատավորի պատասխանատվության միակ հիմք: Պատասխանատվությունը պետք է հիմնված լինի միայն ազգային դատարանի կամ Բարձրագույն դատական խորհրդի (որպես դատարան) դատավորի դիտավորությունը (կանխամտածվածության) կամ կոպիտ անփութությանը հաստատող եզրակացության վրա: Բացի այդ, օգտագործվել է «միտումնավոր» բառը, մինչդեռ Հայաստանի օրենսդրությունում օգտագործվում է «դիտավորյալ» բառը: Երկու տարբեր տերմինների օգտագործումը մտահոգություն է առաջացնում իրավական որոշակիության առումով, քանի որ պարզ չէ, թե արդյո՞ք նոր պահանջը նույնն է լինելու, ինչ Դատական օրենսգրքում ներկայացված հին պահանջը: Սա պետք է հստակեցվի:
- ❖ ՄԻԵԴ վճիռները, որպես կանոն, չեն արձանագրում առանձին դատավորի կամ աստյանի մեղքը:
- ❖ «Մարդու հիմնարար իրավունք» տերմինը. այդ հիմնարար իրավունքները պետք է հստակորեն սահմանվեն Նախագծում՝ որպես ՀՀ միջազգային պայմանագրերով, այդ



թվում՝ ՄԻԵԿ-ով նախատեսված իրավունքներ: Նախագիծը պետք է ամրագրի խախտման մակարդակը սահմանող բարձր շեմ կամ աստիճանական պատժամիջոցներ սահմանի, որպեսզի բոլոր խախտումները չհանգեցնեն դատավորի լիազորությունների դադարեցմանը: Վերջին պատժամիջոցի համար շեմը պետք է լինի այնպիսի խախտում, որը հանգեցրել է մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման (դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանման համաձայն) և կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, այսինքն, որն ակնհայտորեն անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

- ❖ «Միջազգային դատարան կամ այլ միջազգային հաստատություն» տերմինը. եթե «միջազգային դատարան» ասելով նկատի է առնվում ՄԻԵԿ-ը, ապա դա պետք է հստակորեն նշվի նախագծում: Պետք է հստակ թվարկվեն նաև «միջազգային հաստատությունները»՝ հակառակ դեպքում այս հատվածը պետք է դուրս գա կարգավորումներից:
- ❖ «Դատավորի կողմից» դիտավորյալ խախտում տերմինը. սա բարձրացնում է, բայց չի պատասխանում վերագրման հարցին, այսինքն՝ ո՞վ (ո՞ր դատավորը) կարող է պատասխանատվության ենթարկվել: Սա հատկապես դժվար է այն դեպքերում, երբ որոշումներ են կայացվում դատավորների պալատների կողմից: Սրան պետք է հստակորեն անդրադառնալ:
- ❖ Ընթացակարգ. որո՞նք են այն դատավարական կանոնները, որոնք կկիրառվեն այս նոր անհամատեղելիության հիմքով դատավորի լիազորությունների դադարեցմանը հանգեցնող վարույթների նկատմամբ: Սա պետք է նախատեսվի Նախագծում, քանի որ, անկախ Դատական օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի կետից, անհասկանալի է մնում, թե ի՞նչ ընթացակարգերով և ի՞նչ չափանիշներով Բարձրագույն դատական խորհուրդը և Սահմանադրան դատարանը խախտումները դիտավորյալ/կանխամտածված կորակեն: Դա պետք է հստակեցվի:
- ❖ Օրենսդրության հետադարձ ուժի կիրառումը. այն պետք է ընդհանրապես բացառվի՝ ապահովելու համար, որ չստեղծեն հնարավոր հետագա մարտահրավերներ Հայաստանի համար ՄԻԵԿ-ում: Թեև, խստորեն ասած, եվրոպական չափանիշների խախտում չէ, անհրաժեշտ է ապացուցել «ընդհանուր շահի (general interest) պարտադիր հիմքերը» կամ «հանրային շահի (public-interest) նկատառումները» և բավարարել կանխատեսելիության պահանջը: Խստորեն չիոստելով եվրոպական չափանիշների խախտման մասին, պետք է ապացուցվի «հանրային շահի պարտադիր հիմքերը» կամ «հանրային շահի նկատառումները» և բավարարի կանխատեսելիության պահանջը:



Անդրադառնալով լրամշակված Նախագծին՝ նշենք, որ Վենետիկի հանձնաժողովի ոչ բոլոր ղիտարկումներն են հաշվի առնվել, որոնց կանդրադառնանք ստորև:

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ

ՀՀ արդարադատության նախարարությունը հանրային քննարկման է դրել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)⁴: 2022 թվականի ապրիլի 22-ին ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը ստացել է հավանություն և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով:

Նախագծով նախատեսվել է «Դատական օրենսգրքի» 144-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 1.1 կետով հետևյալ խմբագրությամբ.

«1.1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ղիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, եթե խախտումը հայտնաբերվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի ակտի ուսումնասիրության արդյունքում: Սույն կետով նախատեսված դեպքում կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո անցել է 15 տարի»:

Լրամշակված Նախագծով պահպանվել է օրենքին հետադարձ ուժ տալու կարգավորումը, այս կապակցությամբ վերստին նշենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներով արձանագրված խախտումները իրավացիորեն պետք է հանդիսանան քննության առկա՝ դրանում դատավորի կողմից կարգապահական խախտում թույլ տալու հանգամանքը պարզելու նպատակով, սակայն վարույթ կարող է հարուցվել միայն օրինականության և Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքների պահպանմամբ, մասնավորապես, Սահմանադրության 73-րդ հոդվածը

⁴ <https://www.e-draft.am/projects/4162>



նախատեսում է օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի կիրառման կանոնները, մասնավորապես. «1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: 2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր թիվ ՄԴՈ-1326 որոշմամբ ընդգծել է, որ «... անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը», և որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը «... հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով⁵»:

Հանրային շահի ապահովման տեսանկյունից անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժի գործողությունը կարող է տարածվել վարչական և քաղաքացիական գործերով քննության վարույթներ վրա, սակայն ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է հետադարձության արգելման ընդհանուր պահանջ, հետևաբար մինչ սահմանադրական փոփոխություններն այս մոտեցումը կհամարվի Սահմանադրությանը հակասող:

Կրկին հորդորում ենք օրենքին հետադարձ ուժ հաղորդելու հարցը դիտարկել Սահմանադրության բարեփոխումների շրջանակներում՝ լավագույն փորձի վրա հիմնված, խիստ իրավաչափ նպատակ հետապնդող և հանրային շահից բխող բացառություն նախատեսելու միջոցով:

Հատկանշական է, որ «Դատական օրենսգրքի» 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն կարգապահական վարույթ հարուցելու առիթ է վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը: Նշված առիթը ներդրվել է 25.03.20 [ՀՕ-197-Ն](#) օրենքի ընդունմամբ, սակայն անհայտ է, թե արդյո՞ք նշված հիմքով վարույթներ ներկայումս հարուցվում են, թե ոչ, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

⁵ Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1326 որոշում



վճիռների հիման վրա հարուցված կարգապահական վարույթներ հանրությանը հայտնի չեն: Ստացվում է, որ մի կողմից, նախաձեռնվում է հետադարձ ուժի արգելքի խախտմամբ վարույթներ հարուցելու ընթացակարգ, մյուս կողմից, ներկայումս արձանագրվող խախտումները մնում են անհետևանք:

Նախագծով կարգապահական վարույթ կարող է հարուցվել վարույթ հարուցող մարմնի կողմից խախտումը հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, եթե խախտումը հայտնաբերվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի ակտի ուսումնասիրության արդյունքում: Կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո անցել է 15 տարի:

Այսպիսով, կարգապահական վարույթ հարուցելու առիթը միջազգային դատարանի դատական ակտերի ուսումնասիրությունն է, մինչդեռ ուսումնասիրության իրականացման ժամկետ Նախագիծը չի նախատեսում, և ստացվում է, որ ուսումնասիրությունը կարող է իրականացվել նախագծի ընդունումից անորոշ ժամանակ անց: Ըստ այդմ, «վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում» ձևակերպումը անհրաժեշտ է հստակեցնել, մասնավորապես նախատեսել, թե օրենքի ուժի մեջ մտնելուց հետո որքան ժամանակի ընթացքում է լիազոր մարմինը կատարում ուսումնասիրություն և դիմում Բարձրագույն դատական խորհուրդ արձանագրված խախտումների մասով, քանի որ գործող խմբագրությամբ առաջնորդվելու դեպքում վարույթի հարուցման ժամկետն արդեն իսկ սպառված է:

Բացի այդ, լրամշակված Նախագիծով առաջանում է հակասություն 25.03.20 [ՀՕ-197-Ն](#) օրենքի անցումային դրույթով ամրագրված կարգապահական վարույթ հարուցելու առիթի ժամկետի, որը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի 2020 թվականի մայիսի 2-ից հետո կայացրած ակտերով և առաջարկվող 15 տարվա վաղեմության խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերի հիման վրա հարուցվող կարգապահական վարույթ հարուցելու միջև:

Ստացվում է, որ Նախագծի ընդունման արդյունքում ՀՀ դատական օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետը հակասելու է նույն օրենսգրքի 146-րդ հոդվածի անցումային դրույթով ամրագրված հարուցման ժամկետին:

Նախագծով չեն հստակեցվել նաև այն իրավունքները, որոնց վերաբերյալ ՄԻԵԴ վճռով խախտման արձանագրման հիմքով կարող է կարգապահական վարույթ նախաձեռնվել:



Նախագծում սահմանվել է «նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտում» եզրույթը, մինչդեռ ՄԻԵԴ վճռով արձանագրվում է ՄԻԵԿ-ով սահմանված և պաշտպանվող իրավունքների խախտում: Այսպես Վենետիկի հանձնաժողովն ոչ բոլոր իրավունքների խախտման մասով է քաջալերում վարույթի հարուցումը. «50. Առցանց հանդիպումների ժամանակ Վենետիկի հանձնաժողովի պատվիրակությանը տեղեկացվել է, որ Նախագծերը ներառելու են միայն մարդու իրավունքների շատ լուրջ խախտումները, ինչպիսիք են ազատության իրավունքի կամ սեփականության իրավունքի խախտումները, բայց ոչ արդար դատաքննության բոլոր պահանջների խախտումները, օրինակ. Վենետիկի հանձնաժողովը խորհուրդ է տալիս հստակ սահմանել մարդու իրավունքների խախտումները»:

Բացի այդ, Վենետիկի հանձնաժողովը նշել էր, որ Նախագծերում բացակայում է խախտման մակարդակը սահմանող շեմ և աստիճանական պատժամիջոցների ձև: Ոչ միայն մարդու իրավունքների շատ լուրջ և ակնհայտ խախտումներն են ընդգրկված փոփոխությունների նախագծով, այլ նաև մարդու իրավունքների ոչ լուրջ խախտումները, այս համատեքստում անհարժեշտ է նախատեսել աստիճանական պատժամիջոցների ձև, որպեսզի բոլոր խախտումները չհանգեցնեն դատավորի լիազորությունների դադարեցման:

Նախագծի ուսումնասիրության արդյունքում բաց է մնացել այն հարցը, թե արդյո՞ք ՀՀ կառավարության և դիմումատուի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը նույնպես հիմք է հանդիսանալու ուսումնասիրության վարույթ հարուցող մարմնի համար, եթե այո, ապա նման որոշումները նույնպես պետք է նախատեսվեն Նախագծում:

Եզրափակիչ մասի և անցումային դրույթների համաձայն. «2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կայացված Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումներով, եթե մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի: Սույն մասով նախատեսված դեպքերում էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով»:

Դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և



անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով պայմանավորված լինելը որոշակի և կանխատեսելի չափանիշ չէ խստագույն կարգապահական պատասխանատվության միջոցը կիրառելու համար, ըստ այդմ, առաջարկում ենք ըստ խախտման հետևանքների լրջության կարգավորել ընտրվող պատժի խստությունը, քանի որ լայն իմաստով խախտման համար նախատեսվող պատասխանատվությունը կիրառվում է հանրային շահից ելնելով և վերջին հաշվով դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունն ապահովելու նպատակով:

3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախատեսել, թե օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ի՞նչ ժամկետում է լիազոր մարմինը կատարում ուսումնասիրություն և դիմում Բարձրագույն դատական խորհուրդ:
2. Վերացնել 144-րդ հոդվածով սահմանված կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու ժամկետի և 146-րդ հոդվածի անցումային դրույթով ամրագրված հարուցման ժամկետի հակասությունը:
3. Սահմանել, թե արդյո՞ք ՀՀ կառավարության և դիմումատուի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը նույնպես հիմք է հանդիսանալու ուսումնասիրության վարույթ հարուցող մարմնի համար, եթե այո, ապա նման որոշումները նույնպես պետք է նախատեսել Նախագծում:
4. Սահմանել որոշակիության և կանխատեսելիության չափանիշներ դադատավորի լիազորությունների դադարեցման համար, ըստ խախտման հետևանքների լրջության կարգավորել ընտրվող պատժի խստությունը: